



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020 թ.

ԳԱԳԻԿ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ

Լոռու մարզ, գ. Ջրաշեն, 9-րդ փողոց, 44 տուն
(էլ. հասցե՝ melqonyanlusine96@gmail.com)

Հարգելի՛ պարոն Միսակյան,

ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 02.09.2020թ. թիվ 14/14.9/41799-2020 առցանց հարցումը վերահասցեագրվել է Լոռու մարզպետարան:

Նույն բովանդակությամբ ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 14.05.2020թ. թիվ 14/14.7/23957-2020 առցանց դիմումին Ձեզ պատասխանվել է ՀՀ Լոռու մարզպետի 25.05.2020թ. թիվ 01 /107.3.1/04612-2020 գրությամբ:

Կրկին հայտնում եմ, որ ներկայումս աղետի գոտու գյուղական բնակավայրերում իրականացվող **միակ** բնակարանաշինական (բնակարանային պայմանները բարելավելու) ծրագիրը 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիրն է:

Պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Համաձայն նշված կարգի 2-րդ կետի բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիություն ունեցող և տվյալ բնակավայրում հաշվառված ու մշտական բնակություն հաստատած այն անձինք ու նրանց ընտանիքի անդամները, որոնց բնակելի տները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ 2008թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ, բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն, ենթակա են քանդման: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառումը իրականացվել է մինչև 2008թ. դեկտեմբերի 15-ը՝ քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Ձեր ընտանիքը ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերը՝ այդ թվում **բնակելի տան տեխնիկական վիճակի**

վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացություն (համաձայն որի Ձեր բնակելի տունը ենթակա է քանդման) սահմանված ժամկետում չի ներկայացրել Ջրաշենի համայնքապետարան, որի պատճառով չէր կարող ընդգրկվել երկրաշարժից անօթևան մնացած Ջրաշեն համայնքի ընտանիքների հերթացուցակում:

Եթե Դուք գտնում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են, կարող եք դիմել դատարան:

Երբ ավարտվի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովման ծրագիրը և մարզի տարածքում իրականացվի որևէ բնակարանաշինական կամ բնակարանային պայմանների բարելավման ծրագիր Ձեր կարգավիճակն ունեցող անձանց համար՝ հաշվի կառնվի նաև Ձեր խնդրանքը:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ